

աւրհնել ժ: — Առ հիւանդոսն երթալ ժԱ: —
 Անբմ է շեղձ և հնձան աւրհնել ժԲ: — Միրգ
 աւրհնել ժԳ: — Ժամահար աւրհնել ժԴ: —
 Զնկարեալ Եկեղեցի աւրհնել ժԵ: — Նոր գիրք
 աւրհնել ժԶ: — Խունկ աւրհնել ժԶ: — Երդ-
 Մասարի ժԸ: — Վասն երաշուսթեան ժԹ: —
 Խազող աւրհնէք Ի: — Մեկբրութիւն ԻԱ: —
 Քառասնաւորեա տղայի ԻԲ: — Հարսանեաց հան-
 դերձ աւրհնել ԻԳ: — Պօսակ առնել ԻԴ: —
 Պօսակ վերացուցանել ԻԵ: — Երկրորդ պսակ
 ԻԶ: — Հաղորդ տալ ԻԶ: — Աշխարհաթաղ
 ԻԸ: — Աշխարհաթաղի այգուցն ԻԹ: — Տղա-
 յաթաղ առնել Լ: — Տղայաթաղի այգուցն ԼԱ:
 — Է. օրէի կամ Խ. Ի կամ տարեցի ԼԲ: —
 Ողբ և երգ նընշեցելոց ԼԳ: — Գանձ և տաղ
 նընշեցելոց ԼԴ: — Գարձեալ գանձ նընշեցելոց
 ԼԵ: — Տաղ մանուկ նընշեցելոց ԼԶ: — Տաղ
 փոքր նընշեցելոց ԼԷ: — Տաղ փոքր տղայ նընշե-
 ցելոց ԼԸ: — Տաղ կտրիճ հասակ նընշեցելոց
 ԼԹ: — Տաղ հեռուոր նընշեցելոց Խ: — Տաղ զա-
 րիպ նընշեցելոց ԽԱ: — Հոգեհանգստի աղ աւրհնել
 ԽԲ: — Հատի պատարագի ԽԳ: — Տնականի աղ
 աւրհնել ԽԴ: — Տնականի սեղան աւրհնել ԽԵ:
 — Ապաշխարող աւրհնել ԽԶ: — Ապաշխարող
 արձակել ԽԷ: — Ուրբելուայ առնել ԽԸ: —
 Քարող պատուիրանին ԽԹ: — Զուր աւրհնել
 Կ: — Խաչ աւրհնել ԿԱ: — Զնշխարս Երբոց
 փոխել ԿԲ: — Զրհոր աւրհնել ԿԳ: — Ժամա-
 աուն և ժողովուրդ աւրհնել ԿԴ: — Քահանա-
 յաթաղ ԿԵ: — Քահանայաթաղի այգուցն որ
 է երկրորդ աւրհն ԿԶ: — Երրորդ աւուրն ԿԷ: —
 Զորբորդ աւուրն ԿԸ: — Հինկերորդ աւուրն
 ԿԹ: — Վեցերորդ աւուրն Կ: — Եւթներորդ
 աւուրն ԿԱ: — Հընկեռասան աւուրն ԿԲ: —
 Քառասներորդ աւուրն ԿԳ: — Քահանայի տա-
 րեցեան ԿԴ:

Ահա Հայր Մայրոցի 64 զուխներու ցանկը,
 որուն մէջ կը տեսնենք հայ աշխարհիկ լեզուով
 գրուած՝ ութը ողբ-գանձ-տաղերը, որոնց մէջ
 Ի յայտ կու գան նաև ժողովրդական և պարսիկ
 ու թուրք բաներ:

Հետաքրքրական և մատենագրական նորոյթ
 է այս Հայր Մայրոցի մէջ գրուած աշխարհիկ
 ողբ-տաղերը՝ մեռելներուն ձօնուած: ՌԴփան
 թանկագին գանձեր պիտի ըլլային նա և հար-
 սանեակն երգերն, կամ ժողովուրդի կեանքի այլ
 երեւթիւններուն նուիրուած ժողովրդական երգե-
 ռը, եթէ անոնք ևս մտած ըլլային Հայր Մաշ-
 տոցին մէջ:

Սակայն անշուշտ Մայրոց մը՝ իբր սրբազան

գիրք, չէր կրնար իր մէջ ամփոփել այդ տեսակ
 նիւթ ունեցող տաղեր, կամ գանձեր, այս պատ-
 ճառաւ Հայր Մայրոցն ալ միայն մեռելական
 երգեր կը պարունակէ. այս երգերն ալ արդէն
 ծանօթ են մեզի, հրատարակուած ըլլալով միջ-
 նադարեան քերթողներու գրուածներու հաւա-
 քածոներուն մէջ:

ՀԱՅՐ ԱՆԻՄՈՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՊԻՆԻ

ՀԱՅ ԵՒ ԳԻՆԻ

ԱՂՈՓՔ ԱԽՈՐԱՐՏՈՒ ՀԱՄԱՐ

Լեռներուն վրայ հովանաւոր ամպերէ
 Որ կը վարդեն սըրընթաց՝
 Շունչէն ժպտուն մայիսի՝
 Հասերուն վրան ըսպիտակ,
 Արօտներուն վրայ, 'րեւուն մէջ հոտաւէտ,
 Ապենինիտանց վայրենի,
 Եւ զագաթին վրայ սեպագեալ զագաթանց
 Զըւարթացած միայն կապոյտ ակքանով,
 Երկնքին, ո՞վ Լէոբարտի, գոչեցի
 Յաւագին քաղցր տողերդ:

Ու տխրութիւնը երբոր
 Սիրատարիկի սրտին՝ սիրով չըսիրուած
 Եւ ոչ մէկէն, այլ խոցոտուած ամէնքէն,
 Կը բացուէր բուռն յորգահեղի քնքրութեամբ —
 Գիշերային գերդ ծաղիկ
 Յանկարծափթիթ՝ որ կը բացուի թովուրեամբ
 Փուշին՝ ոստին ընդմէջէն —
 Այն ատեն իմ աչքերէս
 Ա՛րիւնէլ արցունքը բացակէզ գէմքիս վրայ:

Եւ ցնծութեանը առջեւ
 Վերջոյցսած զարունին
 Կ'անիծէի թագթաքուր՝ ժանտ զօրութիւնն
 Որ է իշխան հասարակաց վըտանդին.
 Կը տեսնէի առին հանդիք կը փոխուէր
 Զանձրոյթի. խուլ ու պոռոտ
 Աշխարհի մէջ որ տըղու պէս կը ցնծայ,
 Աւագոյն բախտ թուեցաւ ինձ
 Պիշ կաթոգին մահուան մէջ
 Գիտել անվերջ ազատութիւնն ողնչին:

Սիրտը վիհանձրն եւ մեծ
 Որ կը տրտիչէր քու խղճտանդուած ու տանջուած
 Խեղճ միտիդ մէջ յոգնաբեկ,
 Այն սիրտը վիհ որ փափագով մ'անյազուրդ
 Յիշատակաց արժանի պերճ գործերու,
 Կը զօրացնէ տակաւին
 Մերը՝ թէեւ քուկիկնէդ աշխարհ տարբեր,
 Որ եւ անհունը փնտռեց,
 Միթէ կրնամ լեցուիլ ան
 Տիեզերքին տնտնկութենէն շրջաւոր:

Բայց բարձունքին մէջ երկնի,
 Գերիվերոյ պղտոր տղմուտ գորտնոցէն
 Որ կը խճողէ եւ կը թիւնէ այս աշխարհն,
 Տնկարանին վըրայ բարձր
 Ու պղլուլուն ու անկոթուն ծաղիկներ
 Կը շողշողան շէկ կրակով:
 Գերիվերոյ մաքուր խելքէն ու մաքէն
 Կը տրտիչ սիրտ մ'հայրական,
 Անդունդ սիրոյ յաւերժիկ,
 Ուր աշխարհ քաղցր է նաւբեկիլ, Աստուած իմ:

Ով կառափին վրայ կըրեց
 Չարչարանքներ աշնպէս որ քու արցունքներդ
 Բազդատութեամբ ոչինչ են,
 Ուարարածոց հետ ուրիշ
 Գլնեց ըզքեզ արինազանգ թռչակով,
 Գուն՝ տղայական հասակիդ՝
 Չայն նետեցիր զերդ տընտուր ոտտ մոխրացած
 Առասպելի — ու այս կենտրին մէջ քեզի
 Պակսեց ամէն բան զի Քրիստոս կը պակսէր:

Արդ որ իրեն պարզուեցաւ
 Ճշմարտութիւնն իր իսկութեամբը համբուն,
 Թող զըջնդակ կայքին մէջ
 Ողորմութիւնըդ քու, Տէր,
 Լուսաւորէ՛ անոր հոգեակն ամայի,
 Հասնի՛ հուսկ օրն՝ ուր պարտուած
 Արդարութիւնն՝ արքայութեան արքային
 Գըթութենէն, ըսպանեաւ իր հոգին
 Վերածընի անճառելի ցնծութեան:

Բ Ե Ք Ո Վ Ե Ն

Ինչպէս վերելք մ'երգելով դէպ հիացում մ'աւ,
 [դէկէզ,
 Որ կը յուզէ ահաբեկ կ'ընէ ամէն սիրող սիրտ,
 Ինչպէս վերելք մ'հեծելով 'նդ առաջ սիրոյ
 |տազնապի

Որ ամէն ինչ կը փոխէ կ'այլակերպէ վեհոււ,
 [թեամբ,
 Ինչպէս վերելք մը լալով դէպ ի բարձունք մը
 [փթթուն
 Ուր որ ամէն յուսահատ հեշտութիւններ կը
 [հանգչին,
 Ինչպէս թռչիլ մը գոչմամբ դէպ ի երկինք մը
 [տանջող,
 Թոխչքով ցնծուն ու բախուն եւ ըզզլիւի բերւ,
 [կրութեամբ,

Կը պայթի քու երգըդ սրտիդ արինէն
 Ո՛վ ծարաւի սիրոյ դու խուլ հըրեշտակ:

Հողմատատան ծովերու վրայ կաճառներ աստ,
 [զերու,
 Հոյլք աստղերու ծաղկափթիթ նըշուազիդ պսաւ,
 [կազարդ,
 Անապատներն կը պնեն տպագիտով՝ արծաթով
 Երբոր Յնչիկն հոսելով անդորրութեամբ աւ,
 [զօթի
 Քաղցրութիւնով կ'ողողէ հաստատութիւնը ճերւ,
 [մակ,
 Երազ պարկեշտ գիշերի որ աղջն ի լոյս կը փոխէ,
 Եւ իբր ըստոյզ փրկութեան ալելուիան ճշմարիտ,
 Իբր ովսաննա համօրէն յուսապատար մարդւ,
 [կութեան

Կը պայթի քու երգըդ սրտիդ արինէն
 Ո՛վ ծարաւի սիրոյ դու խուլ հըրեշտակ:

Երանելաց օրհնութիւնը եւ նըազներ բարւ,
 [ծրաթիւ
 Հոգիներու՝ թօթափած աղցերն՝ իղձերն երկրաւոր,
 Գողտրիկ՝ քնքուշ մրմունջներ մանուկներու՝ տուր,
 [բերու,
 Յիշատակներ ողջախոհ անմեղունակ սէրերու,
 Կը յօրինեն միակ երգ մ'յաղթողական ձայներու
 Սաղմոս մը զեր մարդկային խոստումներու,
 [փառքերու,
 Եւ գիթիւրամբ մը կարծես ցնծուն՝ հընուուն
 [վըկայից,
 Կարծես խմբերգ մ'անսահման գերերջանիկ յաղւ,
 [թութեանց,

Կը պայթի քու երգըդ սրտիդ արինէն
 Ո՛վ դու սիրոյ ծարաւի խուլ հըրեշտակ:

Թրգմ. Հ. Ա. ՂԱՅԻՆԻԱՆ